

ՀՀ անվտանգության խորհրդի կարգավիճակի խնդրի շրջանակներում արտասահմանյան որոշ երկրների փորձի քաղաքական-իրավական գնահատումը

Նիկողոսյան Ս. Վ.

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ,
ՀՀ ՊՆ աշխատակազմի վերահսկիչ վարչություն (Հայաստան, Երևան)
sevakvachiki@mail.ru

Վճռորոշ բաներ՝ ազգային անվտանգություն, պետություն, կառավարման համակարգ, քաղաքականություն, խորհրդակցական մարմին, խաղաղ և պատերազմական պայմաններ:

Политико-правовая оценка опыта некоторых зарубежных стран в рамках проблемы статуса совета безопасности РА

Никогосян С. В.

Институт философии, социологии и права Национальной Академии Наук РА,
Контрольное управление аппарата МО РА (Армения, Ереван)
sevakvachiki@mail.ru

Резюме: Надведомственные государственные органы являются структурами, координирующими деятельность государственных органов в сфере обеспечения национальной безопасности и по разработке ключевых направлений потенциальных внутренних и внешних стратегических угроз и опасностей, которые сформировались и действуют почти во всех зарубежных странах. В статье проанализированы статусы и круг компетенций аналогичных органов США, РФ, Ирана, Польши, Израиля, Грузии, как возможности потенциала улучшения новых возможностей деятельности Совета Безопасности РА. Для обеспечения национальной безопасности РА имеет особое значение на высоком уровне результативно действующая политико-правовая система, которая должна быть сформирована и внедрена в соответствии с международными и региональными безопасностными и военно-политическими реалиями. На политико-правовой основе национальной безопасности строится безопасностная политика страны, которая непосредственно определяет видение развития государства.

Ключевые слова: национальная безопасность, государство, система правления, политика, консультативный орган, мирные и военные условия.

Political and legal evaluation of experience of some foreign countries within the framework of the problem of RA security council status

Nikoghosyan S.V.

The Philosophy, Sociology and Law Institute of the National Academy of Sciences of RA, The control Department of the Ministry of Defense of RA (Armenia, Yerevan)
sevakvachiki@mail.ru

Abstract: Supervisory state bodies are the structures coordinating the activities of state bodies in the sphere of ensuring national security and developing key areas of potential internal and external strategic threats and dangers, which are formed and operate in almost all foreign countries. The article analyzes the statuses and terms of reference of similar bodies of the United States, Russia, Iran, Poland, Israel, Georgia as possibilities for improving the new opportunities for the Security Council. In order to ensure national security, the Republic of Armenia has a particularly significant, highly effective, politically-legal system, which should be formed and implemented in accordance with international and regional security and military-political realities. The country's security policy is being built on the political and legal basis of national security, which directly determines the vision of the development of the state.

Keywords: national security, the state, the system of government, politics, consultative body, peaceful and military conditions.

Յուրաքանչյուր պետության անվտանգության քաղաքականությունը իրականացնող կառույցներում ընդգծվում են հատուկ այդ նպատակով ստեղծված այն հաստատությունները,

որոնք կոչված են մշակելու և իրագործելու երկրի անվտանգության քաղաքականության համակարգում: Այդպիսիք են հանդիսանում հիմնականում անվտանգության

խորհրդակցական մարմինները (խորհուրդները): Արտասահմանյան երկրների անվտանգության համակարգող մարմինների կազմակերպական-կառուցվածքային վերլուծությունը, ստեղծման պատմությունը, կառուցվածքը, խնդիրները և գործառույթները ինչպես գործնական տեսանկյունից, այնպես էլ գիտական առումով բավականին արժեք են ներկայացնում և հնարավորություն ընձեռում նաև ՀՀ-ում կիրառելի դրանց դրական փորձի տարրեր:

Նմանատիպ մարմիններ գործում են Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Ռուսաստանի Դաշնությունում, Մեծ Բրիտանիայում, Ճապոնիայում, Իսրայելում, Ուկրաինայում, Ղազախստանում, Թուրքիայում, Վրաստանում և այլ երկրներում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերգերատեսչական մարմինների քաղաքական-իրավական կարգավիճակը պայմանավորված է երկրի կառավարման ձևից: Տարբեր երկրներում դրանք կոչվում են տարբեր անվանումներով՝ Ազգային անվտանգության խորհուրդ (ԱՄՆ, ՌԴ, Վրաստան), Անվտանգության խորհուրդ (Մակեդոնիա), Ազգային անվտանգության բարձրագույն խորհուրդ (Ռումինիա, Իրան), Անվտանգության խորհրդի պետական քարտուղարություն (Բելառուսիա), Ազգային պաշտպանության խորհուրդ (Լիտվիա), Ազգային անվտանգության և պաշտպանության խորհուրդ (Ֆրանսիա, Ուկրաինա), Անվտանգության կոմիտե (Ղազախստան):

Որոշ երկրներում անվտանգության քաղաքականությունը համակարգող այդ կառույցները ձևավորվել են վերջին տարիներին կամ նոր են կազմավորվում: Այսպես, 2007 թվականին սահմանադրական բարեփոխումների իրականացման շրջանակներում Մեծ Բրիտանիայի վարչապետ Գ. Բրաունը հայտարարեց ազգային անվտանգության խորհրդի ստեղծման մասին: Խորհրդի կառուցվածքի ձևավորումն իրականացվեց ԱՄՆ-ի օրինակով, որը կազմված է նաև վարչապետին կից անվտանգության հարցերով խորհրդականների ինստիտուտից: Փորձագետների մի մասին ներգրավեցին Լորդերի պալատից:

Որպես անվտանգության համակարգի բարեփոխումների շրջանակներում ձևավորված նոր մարմին՝ պաշտպանության և ազգային անվտանգության խորհուրդ կազմավորելու մասին 2008 թվականի հոկտեմբերին հայտա-

րարեց Ֆրանսիայի Նախագահը: Ներկայումս Ֆրանսիայի պաշտպանության և ազգային անվտանգության խորհրդի կազմում ներառվում են՝ վարչապետը, արտգործնախարարը, ներքին գործերի նախարարը, պաշտպանության նախարարը, ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարը: Մյուս նախարարները Խորհրդի գործունեության մեջ կարող են ներգրավվել անհրաժեշտության դեպքում: Այդ մարմնի լիազորությունները ընդարձակվեցին գործող երկու մարմինների՝ ներքին անվտանգության խորհրդի և պաշտպանության խորհրդի լիազորությունների համեմատ: Խորհրդի հիմնական նպատակն է պետության ներքին ու արտաքին անվտանգության ապահովումը:

ԱՄՆ ազգային անվտանգության ապահովման մարմինների համակարգը, որպես այդպիսին, ձևավորվել է 1947 թվականին Կոնգրեսի կողմից ազգային անվտանգության մասին իրավական ակտի ընդունման արդյունքում¹: Վերջինիս ընդունմամբ ԱՄՆ ազգային անվտանգության խորհուրդը ձեռք բերեց ազգային անվտանգության համակարգում բարձրագույն համակարգող և ուղղորդող մարմնի կարգավիճակ, քանզի բացի ազգային անվտանգության հարցերի վերաբերյալ Նախագահին խորհրդատվություն տրամադրելու գործառույթից, օրենքով սահմանվում էր նաև Խորհրդի՝ ազգային անվտանգության հարցերով զբաղվող բոլոր գերատեսչությունների ու ֆեդերալ նախարարությունների ամբողջ գործունեության համակարգման պարտականությունը: Միննույն ժամանակ այդ օրենքը ԱՄՆ Նախագահին չէր վերապահում դաշնային գործադիր իշխանության այլ պաշտոնատար անձանց իր հայեցողությամբ ԱԱԽ անդամ նշանակելու իրավունք, այլ միայն սահմանում էր Խորհրդի՝ մշտական անդամներից բաղկացած կազմը: Դրանք էին՝ ԱՄՆ Նախագահը, Պետքարտուղարը, պաշտպանության, ցամաքային զորքերի, ռազմաօդային և ռազմածովային նախարարները և ազգային անվտանգության պաշարների վարչության պետը:

1949 թվականին օրենսդրական փոփոխու-

¹ The National Security Act of 1947 – July 26, 1947, Public Law 253, 80th Congress; Chapter 343, 1st Session; S. 758, հասանելի է՝ [<https://assets.documentcloud.org/documents/2695389/1947-National-Security-Act.pdf>]

թյան արդյունքում² ԱՄՆ Նախագահին իրավունք տրվեց Կոնգրեսի համաձայնությամբ Խորհրդի կազմում ընդգրկելու այլ դաշնային նախարարությունների ղեկավարներին ու նրանց տեղակալներին, այդ թվում՝ անվտանգության մարմինների ղեկավարներին՝ կախված ուսումնասիրվող հարցերից: Այս փոփոխությամբ Խորհրդի կազմում ավելացվեց նաև ԱՄՆ փոխնախագահը:

1971 թվականին ԱՄՆ Նախագահ Ռիչարդ Նիքսոնի կողմից ԱԱԽ կառուցվածքում ստեղծվեց հետախուզական կոմիտե, որը պետք է զբաղվեր ԱՄՆ-ի հետախուզական և հակահետախուզական գործունեության ընդհանուր առաջնությունների մշակմամբ: Բացի այդ ստեղծվեց նաև «Կոմիտե 40»-ը՝ արտասահմանում գտնվող ԱՄՆ հատուկ ծառայությունների գաղտնի օպերացիաների համակարգման հարցերով զբաղվելու նպատակով:

Պետք է նշել, որ ԱՄՆ ԱԱԽ կառուցվածքը տարբեր ժամանակներում փոփոխվել է կախված պետության նոր ղեկավարի հայեցողությունից: 2009 թվականի փետրվարի 13-ին նախագահի հրամանագրով հաստատվեց ԱԱԽ կազմը՝ ԱՄՆ Նախագահ, ԱՄՆ փոխնախագահ, պետքարտուղար, պաշտպանության, էներգետիկայի, ֆինանսների, արդարադատության և ներքին անվտանգության նախարարներ, ՄԱԿ-ում ԱՄՆ ներկայացուցիչ, Նախագահի աշխատակազմի ղեկավար, Նախագահի ազգային անվտանգության գծով օգնական, ազգային հետախուզության տնօրեն և Միացյալ շտաբերի պետերի կոմիտեի նախագահ³:

ԱՄՆ ազգային անվտանգության խորհուրդն աչքի է ընկնում իր բարդ կառուցվածքով: Այն բաղկացած է տարածաշրջանային, քաղաքականության համակարգման ու գործառնական կոմիտեներից և այլ մարմիններից: Տարածաշրջանային կոմիտեների աշխատանքը ղեկավարվում է Պետքարտուղարի օգնականների կողմից: Տարածաշրջանային կոմիտեներն են՝ Եպրոպայի և Եվրասիական հիմ-

նախնդիրների կոմիտեն, Ռուսաստանի և ԱՊՀ երկրների հիմնախնդիրների կոմիտեն, Արևմտյան կիսագնդի հիմնախնդիրների կոմիտեն, Արևելյան Ասիայի հիմնախնդիրների կոմիտեն, Հարավային Ասիայի, Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի հիմնախնդիրների կոմիտեն և Աֆրիկայի հիմնախնդիրների կոմիտեն⁴:

Գործառնական կոմիտեները հիմնականում ղեկավարվում են ԱԱԽ աշխատակազմի բաժինների ղեկավարների կողմից: Դրանցից առավել կարևորներն են՝ ահաբեկչության դեմ պայքարի տեղեկատվական ռազմավարության, միջազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի, զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարի և ներքին պաշտպանության, սպառազինության վերահսկողության, պաշտպանական ռազմավարության, զինված ուժերի և զորատեսակների պլանավորման, ժողովրդավարության, մարդու իրավունքների և միջազգային օպերացիաների և այլ կոմիտեներ:

ԱՄՆ ԱԱԽ կառուցվածքում կա շուրջ 30 քաղաքականության համակարգման կոմիտե, որոնք ըստ էության միջգերատեսչական հանձնաժողովներ են՝ կազմված համապատասխան գերատեսչությունների ղեկավարների օգնականներից և գերատեսչական փորձագետներից: Պետք է նշել, որ այդ կոմիտեները ԱԱԽ կառուցվածքի առավել ցածր օղակն են կազմում: Դրանք ևս ունեն տարածաշրջանային և գործառնական կամ կոնկրետ խնդրով մասնագիտացումներ⁵:

Ռուսաստանի ազգային անվտանգության ապահովման համակարգում հետևյալ կառուցվածքային տարրերն են առանձնացվում՝ ՌԴ Նախագահը, Անվտանգության խորհուրդը՝ իր միջգերատեսչական հանձնաժողովներով, Դաշնության Խորհուրդը և Պետական Դուման, Կառավարությունը, գործադիր իշխանության դաշնային մարմինները, ՌԴ սուբյեկտների գործադիր իշխանության մարմին-

² Act of August 10, 1949 (National Security Act Amendments of 1949), Public Law 81-216, 63 STAT 578, reorganizing fiscal management in the National Military Establishment to promote economy and efficiency, հասանելի է՝ [https://catalog.archives.gov/id/299860]

³ Конституционно-правовой статус Совета Безопасности Российской Федерации, Под общей редакцией доктора юридических наук Н.П. Патрушева, М., 2009, с. 142-144

⁴ Ավելի մանրամասն տես Иванов С., Структура и функции Совета национальной безопасности США // Зарубежное военное обозрение, 2013, № 4, с. 13-17

⁵ Самуйлов С.М., Современный совет национальной безопасности США // Электронный научный журнал Россия и Америка в 21-ом веке, 2007, № 2, հասանելի է՝ [http://www.rusus.ru/?act=read&id=55]

ները և Ռուսաստանի տեղական ինքնակառավարման մարմինները⁶:

ԱՄՆ ազգային անվտանգության խորհրդից քաղաքական-իրավական կարգավիճակով և կառուցվածքով տարբերվում է ՌԴ անվտանգության խորհուրդը: 1993 թվականի դեկտեմբերի 12-ին Հանրաքվեի արդյունքում ընդունված ՌԴ Սահմանադրությունում ամրագրվեց դրույթ, որով դրվեց ՌԴ Նախագահի կողմից Ազգային անվտանգության խորհուրդ կազմավորելու և ղեկավարելու, ինչպես նաև Խորհրդի կարգավիճակը դաշնային օրենսդրությամբ սահմանելու պահանջը⁷:

ՌԴ անվտանգության խորհուրդը Նախագահին կից կոլեգիալ և խորհրդատվական մարմին է, որն իրականացնում է երկրի ազգային անվտանգության ապահովման բնագավառի միասնական պետական քաղաքականությունը: ՌԴ անվտանգության խորհրդի սահմանադրական կարգավիճակը բնութագրվում է ոչ միայն նրանով, որ Նախագահի կողմից վերջինիս կազմավորումը ամրագրված է Սահմանադրության մեջ և կարգավորվում է առանձին դաշնային օրենքով, այլ նաև նրանով, որ այդ կառույցի ուղղակի, անմիջական կոչվածությունն է ապահովել անհրաժեշտ պայմաններ Նախագահի կողմից իր սահմանադրական լիազորությունների իրագործումը՝ ուղղված ՌԴ անկախության ու տարածքային ամբողջականության, ինքնավարության, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովմանը: Այդ նկատառումով նաև Անվտանգության խորհուրդը կոլեգիալ կազմով Նախագահին կից խորհրդակցական բնույթի մարմին է, որն իրականացնում է երկրի ազգային անվտանգության ապահովման բնագավառում միասնական պետական քաղաքականությունը:

ՌԴ Նախագահի համապատասխան հրամանագրերով հաստատվել և հետագայում փոփոխվել են⁸ ՌԴ անվտանգության խորհրդի խնդիրները, որոնցից հիմնականներն են

⁶ Фомин С.А., Обеспечение национальной безопасности, Курс лекций, М., Изд-во “Флинта”, Московский психологосоциальный институт, 2007, с. 37

⁷ Конституция Российской Федерации, Принята всенародным голосованием 12 декабря 1993 г., հասանելի է՝ [<http://constitution.kremlin.ru/>]

⁸ ՌԴ անվտանգության խորհրդի կարգավիճակը սահմանված է ՌԴ Նախագահի 2011թ. մայիսի 6-ի թիվ 540 հրամանագրով, հասանելի է՝ [<http://pravo.gov.ru/proxy>

- Ռուսաստանի Դաշնության Նախագահի կողմից ազգային անվտանգության ապահովման ոլորտում լիազորությունների իրականացման պայմանների ապահովումը,

- ազգային անվտանգության ապահովման ոլորտում պետական քաղաքականության ձևավորումը և դրա իրականացման նկատմամբ հսկողությունը,

- ազգային անվտանգության սպառնալիքների կանխատեսումը, նույնականացումը, վերլուծությունը և գնահատումը, ռազմական վտանգի և ռազմական սպառնալիքի գնահատումը, դրանք չեզոքացմանն ուղղված միջոցների մշակումը,

- Ռուսաստանի Դաշնության Նախագահի համար առաջարկությունների նախապատրաստումը

- պետական արտաքին ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների ձևավորումը,

- Ռուսաստանի Դաշնության Նախագահի կողմից ազգային անվտանգության ոլորտի վերաբերյալ ընդունված որոշումների իրականացման գործում Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների՝ դաշնային գործադիր մարմինների և գործադիր իշխանությունների գործունեության համակարգումը,

- ազգային անվտանգության ոլորտում գործող դաշնային գործադիր մարմինների գործունեության արդյունավետության գնահատումը:

Խորհուրդն ունի մշտական անդամներ, ովքեր որոշումներ ընդունելիս ունեն հավասար ձայնի իրավունք և անդամներ (ներկայում՝ 18-ն են), ովքեր ունեն խորհրդատվական ձայնի իրավունք: Ներկայում ՌԴ ԱԽ մշտական կազմը հետևյալն է՝ ՌԴ Նախագահ (Անվտանգության խորհրդի նախագահ), կառավարության ղեկավար, Դաշնային խորհրդի նախագահ, արտաքին հետախուզության ծառայության տնօրեն, Պետական դումայի նախագահ, Նախագահի աշխատակազմի ղեկավար, բնապահպանական գործունեության, էկոլոգիայի, և տրանսպորտի հարցերով Նախագահի հատուկ ներկայացուցիչ, անվտան-

[/ips/?docbody=&prevDoc=102017343&backlink=1&&nd410](http://ips/?docbody=&prevDoc=102017343&backlink=1&&nd410): Վերջին փոփոխությունը կատարվել է ՌԴ Նախագահի 2018թ. հունիսի 14-ի թիվ 334 հրամանագրով, <http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&prevDoc=102356099&backlink=1&&nd=102472660>

գության խորհրդի քարտուղար, պաշտպանության, արտաքին գործերի և ներքին գործերի նախարարներ, անվտանգության դաշնային ծառայության տնօրեն⁹:

ՌԴ անվտանգության խորհրդի հիմնական աշխատանքային մարմինները միջգերատեսչական հանձնաժողովներն են և Անվտանգության խորհրդին կից գիտական խորհուրդը: Միջգերատեսչական հանձնաժողովները կարող են կազմավորվել գործառութային և տարածքային սկզբունքներով, դրանց թիվը ներկայումս 7-ն է¹⁰: Անվտանգության խորհրդին կից գիտական խորհուրդը ձևավորվել է 2011 թվականից՝ Անվտանգության խորհրդի, դրա աշխատանքային մարմինների և Անվտանգության խորհրդի աշխատակազմի գործունեության գիտա-մեթոդաբանական և փորձագիտավերլուծական ապահովման նպատակով¹¹:

ԱՄՆ ԱԱԽ հայեցակարգային սկզբունքների հիման վրա է ստեղծված ներկայիս Վրաստանի ԱԱԽ համակարգը: Վրաստանի ազգային անվտանգության հիմքում ներքին, արտաքին ու ռազմական քաղաքականության ինտեգրումն է: Վրաստանի Սահմանադրության¹² 99-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն զինված ուժերի և երկրի պաշտպանությունը կազմակերպելու համար Վրաստանի Նախագահը կազմավորում է Ազգային անվտանգության խորհուրդ և նախագահում է այն: Մինչև նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն Ազգային անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է սահմանադրական օրենքով:

«Վրաստանի ազգային անվտանգության խորհրդի մասին» օրենքի¹³ 2-րդ հոդվածով սահմանված են Խորհրդի իրավասության

շրջանակներում գտնվող հարցերը: Մասնավորապես՝

- Վրաստանի պաշտպանության ռազմավարության մշակումը,
- պաշտպանության կատարելագործման և զինված ուժերի կազմավորման հետ անմիջականորեն կապված հարցերը,
- Վրաստանի դեմ զինված հարձակման, պատերազմ հայտարարելու հետ կապված հարցերը,
- արտակարգ իրավիճակների հետ կապված հարցերը,
- պատերազմական կամ արտակարգ իրավիճակների դեպքերում օրենքին հավասար հանձնարարականներ ընդունելու հարցերը,
- զինված ուժերի կազմավորման ծրագրումը և նախագահի հաստատմանը ներկայացնելը,
- զինված ուժերի հիմնական կազմի հրամանատարների նշանակման և հեռացման հարցերը,
- միջազգային կոնֆլիկտի գոտիների վերաբերյալ առաջարկների մշակումը,
- Վրաստանի կողմից վավերացված պայմանագրերին համապատասխան երկրից դուրս իրականացվող անվտանգության միջոցառումներին մասնակցության նպատակահարմարությունը,
- օրենքով նախատեսված հատուկ դեպքերում Վրաստանի տարածքում այլ պետության զինված ուժերի մուտքի, շարժի և ելքի հետ կապված հարցերի կանոնակարգումը,
- զինված ուժերի ռազմական պատրաստվածության հարցերը:

Իրանի Իսլամական Հանրապետության ազգային անվտանգության բարձրագույն խորհուրդը (ԱԱԲԽ) ստեղծվել է 1979 թվականին՝ Իսլամական հայտնի հեղափոխությունից հետո: Տվյալ կառույցի գործունեության իրավական հիմքն է Սահմանադրության 176-րդ հոդվածը, համաձայն որի՝ Իրանի բարձրագույն ազգային անվտանգության խորհրդի վրա են դրված հետևյալ հիմնական գործառույթները՝ Հանրապետության առաջնորդի որոշմամբ երկրի պաշտպանության և անվտանգության հարցերի վերաբերյալ քաղաքականության մշակում, երկրում ռազմական, քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային գործունեության համաձայնե-

⁹ Официальный сайт Президента РФ, Совет безопасности, [հասանելի է՝ \[http://kremlin.ru/structure/security-council/members\]](http://kremlin.ru/structure/security-council/members)

¹⁰ Официальный сайт Совета безопасности РФ, Межведомственные комиссии Совета безопасности РФ, [հասանելի է՝ \[http://www.scrf.gov.ru/about/commission/\]](http://www.scrf.gov.ru/about/commission/)

¹¹ Положение о Научном совете при Совете Безопасности Российской Федерации, утверждено Указом Президента Российской Федерации от 6 мая 2011 г. N 590, [հասանելի է՝ \[http://www.scrf.gov.ru/about/NS_spis_organ/polozh_NS/\]](http://www.scrf.gov.ru/about/NS_spis_organ/polozh_NS/)

¹² The Constitution of Georgia, Adopted on 24 August 1995, Last amendment 27.12.06, [հասանելի է՝ \[http://www.parliament.ge/files/68_1944_951190_CONSTIT_27_12.06.pdf\]](http://www.parliament.ge/files/68_1944_951190_CONSTIT_27_12.06.pdf)

¹³ Organic Law of Georgia on National Security Council, President of Georgia Mikheil Saakashvili Tbilisi, 11 November, 2004 №565-III, [հասանելի է՝ \[https://nsc.gov.ge/res/docs/2015050117014874786.pdf\]](https://nsc.gov.ge/res/docs/2015050117014874786.pdf)

ցում պաշտպանության ապահովման և պետության անվտանգության շահերի հետ, ինչպես նաև Հանրապետության նյութական ու հոգևոր հնարավորությունների օգտագործումն անվտանգության ներքին և արտաքին սպառնալիքներին հակազդելու համար:

Ներկայումս Իրանի ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի կազմում ներառված են Հանրապետության գերագույն առաջնորդը (խորհրդի ղեկավարը) և թվով 11 անդամներ՝ ԻԻՀ Նախագահը (խորհրդի նախագահը), գերագույն հոգևոր առաջնորդի երկու ներկայացուցիչները, պառլամենտի նախագահը, դատական իշխանության գլուխը, պաշտպանության նախարարը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետը, արտաքին գործերի, ներքին գործերի, տեղեկատվության նախարարները, պլանավորման և կառավարման կազմակերպման կոմիտեի նախագահը, Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղարը¹⁴:

Բարձրագույն խորհրդի աշխատանքների կազմակերպումն ու գործունեությունը հիմնված են տարածքային գործառնական սկզբունքների վրա: Կառուցվածքային առումով այդ կառույցի առանձնահատկությունն այն է, որ դրա շրջանակներում գործում են երկու առանձին խորհուրդներ՝ անվտանգության խորհուրդը (ազգային անվտանգության հարցերով՝ կարգավիճակով ոչ միայն խորհրդատվական, այլև որոշակի աստիճանի կարգադրական մարմին, նախագահը ներքին գործերի նախարարն է) և պաշտպանության խորհուրդը (ռազմական հարցերով խորհրդատվական մարմին, նախագահը զինված ուժերի գլխավոր շտաբի պետն է): Հանրապետության բոլոր տարածքային միավորներում գործում են տեղական անվտանգության խորհուրդներ, որոնց կազմի մեջ մտնում են տարածքային մարզպետը (որպես խորհրդի նախագահ), ԻԻՀ գերագույն առաջնորդի ներկայացուցիչը, տեղեկատվության նախարարության տարածքային վարչության ղեկավարը, տարածաշրջանի իսլամական հեղափոխության պահպանության կորպուսի հրամանատարը, տարածաշրջանի իրավակարգի պաշտպանության մարմինների ղեկավարները,

տեղական գորամիավորման հրամանատարը:

Անվտանգության խորհուրդը համարվում է ոչ միայն խորհրդակցական, այլև երկրի ազգային անվտանգության հարցերով որոշակի աստիճանով նաև կարգադրական մարմին: Անվտանգության խորհուրդը իրականացնում է հետևյալ առանձնացված գործառույթները՝ անվտանգության հարցերով կարևոր տեղեկատվության ուսումնասիրում և վերլուծություն, անվտանգության քարտուղի, քաղաքական, սոցիալական, տնտեսական, դատախրավական և մշակութային հիմնախնդիրների համակողմանի քննարկում, Հանրապետությունում ներքաղաքական իրավիճակի փոփոխության կամ արտաքին ազդեցությունների առկայության պարագաներում անվտանգության հարցերի հետ կապված տարբեր պետական կառույցների գործառնության փոփոխությունների առաջարկում, նաև Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի հանձնարարությամբ ազգային անվտանգության ապահովման ծրագրային նախագծերի մշակում:

Պաշտպանության խորհուրդը Հանրապետության ռազմական հարցերով խորհրդակցական մարմին է: Գործունեությունը վերաբերում է հետևյալ ուղղություններին՝ պատերազմի հայտարարման և խաղաղության կքնման, ընդհանուր գորահավաքի անցկացման մասին որոշումների նախագծերի առաջարկում գերագույն գլխավոր հրամանատարին, բարձրագույն զինվորական պաշտոնների նշանակման թեկնածուների առաջադրում, զինված ուժերի, իսլամական հեղափոխության պահպանության կորպուսի, իրավակարգի պաշտպանության մարմինների ու քաղաքացիական իշխանության փոխգործակցության ձևերի և եղանակների սահմանում, ինչպես նաև ռազմական գիտահետազոտական ու կոնստրուկտորական աշխատանքների, ռազմական տեխնիկայի և սպառազինության արտադրանքի հարցերով տարբեր գերատեսչությունների ու այլ պետական կառույցների փոխգործակցության համակարգում:

Անհրաժեշտ է նշել, որ վերջին մի քանի տարիների ընթացքում Իրանի միջուկային հարցերի ակտուալացման հետ կապված Իրանի ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի դերը զգալիորեն աճեց և ներկայումս

¹⁴ Розов А.А., О Высшем Совете национальной безопасности Ирана, Институт Ближнего Востока, 26 февраля, 2006, <http://www.iimes.ru/?p=4302>

այդ խնդրի վերաբերյալ միջազգային համապատասխան կազմակերպությունների և այլ պետությունների հետ բանակցությունների վարման հիմնական գործառնությունները երկրի ղեկավարությունը դրել է Իրանի Իսլամական Հանրապետության ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի, այլ ոչ թե արտաքին գործերի նախարարության վրա:

Լեհաստանի ազգային անվտանգության խորհուրդն արտաքին և ներքին անվտանգության հարցերով Հանրապետության Նախագահի խորհրդատվական մարմինն է¹⁵: ԱԱԽ-ի հիմնական գործառնություն է պետության անվտանգությանն առնչվող խնդիրների ուսումնասիրությունն ու կարծիքների ձևավորումը, մասնավորապես՝ պետական անվտանգության ընդհանուր ուղեցույցը, արտաքին քաղաքականության սկզբունքները և ուղղությունները, ԶՈՒ գարգացման ուղղությունները, արտաքին անվտանգության հետ կապված հարցերը, ներքին անվտանգությանը և ռեսուրսներին ուղղված սպառնալիքների չեզոքացումը:

Ի պաշտոնե ներկայումս ԼՀ ազգային անվտանգության խորհրդի անդամներ են՝ Ստորին պալատի նախագահը, Սենատի նախագահը, ԼՀ վարչապետը, փոխվարչապետ-էկոնոմիկայի նախարարը, Ազգային անվտանգության բյուրոյի ղեկավարը, արտաքին գործերի, ազգային պաշտպանության, ներքին գործերի, կառավարման և թվայնացման նախարարները, Հանրապետության համար տվյալ ժամանակաշրջանում ազդեցիկ մի քանի քաղաքական ուժերի ղեկավարներ:

Լեհաստանի Հանրապետության ԱԱԽ-ի շրջանակներում գործում է ազգային անվտանգության բյուրոն (ԱԱԲ): Ընդհանուր առմամբ, Լեհաստանի ազգային անվտանգության բյուրոն աջակցում է ԼՀ Նախագահին անվտանգության և պաշտպանության հարցերում՝ ելնելով Նախագահի՝ որպես Լեհաստանի Հանրապետության գերագույն ներկայացուցչի և պետականության շարունակականության երաշխավորի պարտավորություններից, ով պատասխանատու է նաև երկրի Սահմանադրության անմիջական կիրառման, պետական իշխանության պաշտպանության և անվտան-

գության ապահովման, ինչպես նաև Լեհաստանի անձեռնմխելիության ու տարածքային ամբողջականության պահպանման համար: ԱԱԲ-ի խնդիրները և պարտավորությունները բխում են նաև Նախագահի՝ որպես զինված ուժերի գերագույն հրամանատարի սահմանադրական գործառնություններից¹⁶:

Իսրայելի փորձի ուսումնասիրությունը ՀՀ-ում հնարավոր ներդրվող պաշտամենտական համակարգի պայմաններում կարևորվում է նաև այն տեսակետից, որ Իսրայելը նույնպես տեղակայված է աշխարհաքաղաքական բարդ տարածաշրջանում և մշտապես գտնվում է պատերազմական գործողությունների վերսկսման վտանգի տակ¹⁷: Իսրայելի ազգային անվտանգության խորհուրդը հիմնադրվել է կառավարության 1999 թվականի մարտի 7-ի թիվ 4889 որոշմամբ և 2008 թվականի հուլիսի 29-ին ամրագրվել է Ազգային անվտանգության խորհրդի մասին օրենքում՝ որպես ազգային քաղաքականության հարցերը համակարգող, ինտեգրացնող, խորհրդատվական և վերահսկողական մարմին, որը պետք է գործի Իսրայելի վարչապետի համար¹⁸ (Երուսաղեմում ԱԱԽ-ն գտնվում է վարչապետի նրստավայրին կից): Խորհրդի ղեկավարն անմիջականորեն ենթարկվում է վարչապետին:

Պետության ու ժողովրդի գոյությանը մըշտապես սպառնացող պատերազմական գործողությունների վերսկսման վտանգի պայմաններում գտնվող Իսրայելում կառավարությանը (վարչապետին) կից գործում է այսպես կոչված «Փոքր կաբինետը» (որը կոչվում է նաև Ռազմաքաղաքական կաբինետ կամ Անվտանգային կաբինետ), որտեղ ի պաշտոնե ներգրավված են պաշտպանության նախարարը, արտաքին գործերի նախարարը, ֆինանսների նախարարը, ներքին անվտանգության նախարարը, արդարադատության նախարարը,

¹⁵ National Security Bureau of Poland, About the National Security Council, հասանելի է՝ [<http://en.bbn.gov.pl/en/president-of-poland/national-security-coun/about-the-national-sec/99,the-national-security-council.html>]

¹⁶ Լրացուցիչ տես National Security Bureau of Poland, հասանելի է՝ [<http://en.bbn.gov.pl/en/about-bbn/mission/46.Mission.html>]

¹⁷ Քոթանջյան Հ.Ս., Խորհրդարանական հանրապետության անվտանգային-պաշտպանական համակարգը. Իսրայելի և Վրաստանի դասերի ռազմավարական քաղաքագիտական իմաստավորում // ՀՀ ՊՆ Դ. Կանալանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի աշխատանքային տետրեր, 2016, հմ. 2 (88), էջ 10

¹⁸ Israel Executive Branch: National Security Council, Israel Government Press Office, հասանելի է՝ [<http://www.jewishvirtuallibrary.org/israel-national-security-council>]

տրանսպորտի նախարարը, շրջակա միջավայրի պաշտպանության նախարարը, էներգետիկայի նախարարը¹⁹:

Անվտանգության խորհուրդը գործում է եռաստիճան միջգերատեսչաան աստիճանակարգությամբ.

- առաջին՝ փորձագիտական մակարդակում նախարարների տեղակալների համակարգմամբ ի հայտ են բերվում անվտանգությանը վերաբերող խնդրահարույց հարցերը,

- միջին օղակում՝ պաշտպանական քաղաքականության, ինչպես նաև ներքին ու արտաքին անվտանգության մյուս ենթադրուներում որոշումների հասունացման ու լիարժեք մշակվածության նպատակով կազմավորվում է համապատասխան գերատեսչությունների ղեկավարների առաջին տեղակալների մակարդակով խորհրդակցական մարմին,

- Անվտանգության խորհրդի՝ որպես բարձրագույն մարմնի իրավասությունները երկու ենթաուղղվածություն ունեն. որպես կոլեգիալ մարմին՝ Վարչապետի ղեկավարությամբ և խորհրդակցությունների անցկացմամբ՝ Անվտանգության խորհրդի քարտուղարի ղեկավարությամբ:

Այսպիսով, ներկայացված օրինակները ցույց են տալիս, որ թեև տարբեր երկրներում ազգային անվտանգության քաղաքականությանը վերաբերող օրենսդրություններում առկա են ընդհանուր նպատակներ, միևնույն ժամանակ դրանցից յուրաքանչյուրն առանձնանում է իր քաղաքական-իրավական բնորոշումներով, կազմավորման ու ենթակայության, կառուցվածքային և գործառույթային առանձնահատկություններով: Հայաստանի Հանրապետությունում 2015թ. անցկացված սահմանադրական բարեփոխումներով նախատեսվեց, որ 2018թ. ապրիլից վարչապետը գլխավորում է Անվտանգության խորհուրդը, որը սահմանում է նաև պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները: Անվտանգության համակարգող մարմինների պրակտիկայի ուսումնասիրությունը արժեքավոր փորձ է ստեղծում Հայաստանի Հանրապետության անվտանգության քաղաքականության ձևավորման ու գործնա-

կանում դրա կիրառելիության ապահովման կառուցակարգերի հետևողական զարգացման համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՌԴ անվտանգության խորհրդի կարգավիճակը սահմանված է ՌԴ նախագահի 2011թ. մայիսի 6-ի թիվ 540 հրամանագրով, հասանելի է [http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&prevDoc=102017343&backlink=1&&nd410]: Վերջին փոփոխությունը կատարվել է ՌԴ Նախագահի 2018թ. հունիսի 14-ի թիվ 334 հրամանագրով, http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&prevDoc=102356099&backlink=1&&nd=102472660
2. Քոթանջյան Հ.Ս., Խորհրդարանական հանրապետության անվտանգային-պաշտպանական համակարգը. Իսրայելի և Վրաստանի դասերի ռազմավարական քաղաքագիտական իմաստավորում // ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի աշխատանքային տետրեր, 2016, հմ. 2 (88), էջ 9-26
3. Иванов С., Структура и функции Совета национальной безопасности США // Зарубежное военное обозрение, 2013, № 4, с. 11-23
4. Конституционно-правовой статус Совета Безопасности Российской Федерации, Под общей редакцией доктора юридических наук Н.П. Патрушева, М., 2009, 255 с.
5. Конституция Российской Федерации, Принята всенародным голосованием 12 декабря 1993 г., հասանելի է [http://constitution.kremlin.ru/]
6. Официальный сайт Президента РФ, Совет безопасности, հասանելի է [http://kremlin.ru/structure/security-council/members]
7. Официальный сайт Совета безопасности РФ, Межведомственные комиссии Совета безопасности РФ, հասանելի է [http://www.scrf.gov.ru/about/commission/]
8. Положение о Научном совете при Совете Безопасности Российской Федерации, утверждено Указом Президента Российской Федерации от 6 мая 2011 г. N 590, հասանելի է [http://www.scrf.gov.ru/about/NS_spis_organ/polozh_NS/]
9. Розов А.А., О Высшем Совете национальной безопасности Ирана, Институт Ближнего Востока, 26 февраля, 2006, հասանելի է [http://www.iimes.ru/?p=4302]
10. Самуйлов С.М., Современный совет национальной безопасности США // Электронный научный журнал Россия и Америка в 21-ом веке, 2007, № 2, հասանելի է [http://www.rusus.ru/?act=read&id=55]
11. Фомин С.А., Обеспечение национальной безопасности, Курс лекций, М., Изд-во “Флинта”,

¹⁹ Լրացուցիչ տե՛ս Dr. Chen Friedberg, Reuven Hazan, Legislative Oversight of the Executive Branch in Israel: Current Status and Proposed Reform, Softcover, Hebrew, p. 126

